# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» [illegible] 2023 **թվականի** N 2040-Ա

### <<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ի 2023 թվականի օգոստոսի 03-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 07-ին 16411 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ 1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 18 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի օգոստոսի 10- ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 09-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիէլ Սերվիսիս>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» օգոստոսի 2023 **թվականի** N 2039Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գևորգ Սահակյանի (ՀՎՀՀ՝ 57462906, գրանցման ամսաթիվը՝ 26.07.2023 թ.) 2023 թվականի օգոստոսի 8-ին ներկայացրած հայտը համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 8-ին 16445-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գևորգ Սահակյանին Գյումրի քաղաքի Գորկու 12 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գևորգ Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<< 11 >> օգոստոսի 2023 թվականի N 2038-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՆՈՒՅՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՊԱՊՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրու կոմունալ ծառայություն >> համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի աշխատանքային պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն հիմնարկի տնօրենի տեղակալ Արման Սամվելի Պապոյանին՝ 2023 թվականի օգոստոսի 14-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Սամվելի Պապոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Ա.ՊԱՊԻԿՅԱՆ
փոխարինող

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» օգոստոսի 2023 թվականի N 2037-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՏԱՇԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրու կոմունալ ծառայություն >> համայնքային բյուջետային հիմնարկի ( այսուհետ՝ հիմնարկ) տնօրենի տեղակալ Արտաշես Արտավազդի Գևորգյանին ազատել հիմնարկի տնօրենի պարտականությունների կատարումից՝ 2023 թվականի օգոստոսի 14-ից:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտաշես Արտավազդի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

X

Ա.ՊԱՊԻԿՅԱՆ
փոխարինող

ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«11» օգոստոսի 2023 թվականի N2036-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ 194,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 07-ին կազմակերպվել է Մուշ-2 թաղամաս N 2/25 հասցեով (ծածկագիր 08-001-0083-0258) 194,4 (մեկ հարյուր իննսունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Արման Գևորգի Հարությունյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 2 000 000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 53):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Մուշ-2 թաղամաս N 2/25 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 194,4 (մեկ հարյուր իննսունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0083-0258) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Արման Գևորգի Հարությունյանին սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Արման Գևորգի Հարությունյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Արման Գևորգի Հարությունյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել սպասարկման օբյեկտ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Գևորգի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2023 թվականի N 2035-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ 565,54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 07-ին կազմակերպվել է Ա.Սավոյան փողոց N 1/14 հասցեով (ծածկագիր 08-001-0317-0115) 565,54 (հինգ հարյուր վաթսունհինգ ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 54):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ա.Սավոյան փողոց N 1/14 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 565,54 (հինգ հարյուր վաթսունհինգ ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0317-0115) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Ռուբեն Սամվելի Մկրտչյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2023 **թվականի** N 2034-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՎՍԵՍ ԽԱՉԻԿԻ ՋԱՆՈՅԱՆԻՆ 59,28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 07-ին կազմակերպվել է Մ.Խորենացու փողոց N 25/3 հասցեով (ծածկագիր 08-001-0114-0133) 59,28 (հիսունինը ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Մովսես Խաչիկի Ջանոյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 51):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Մ.Խորենացու փողոց N 25/3 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 59,28 (հիսունինը ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0114-0133) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Մովսես Խաչիկի Ջանոյանին սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Մովսես Խաչիկի Ջանոյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Մովսես Խաչիկի Ջանոյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել սպասարկման օբյեկտ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մովսես Խաչիկի Ջանոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«11» Օգոստոսի 2023 թվականի N2033-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՏՈՒՇԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ 78,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 07-ին կազմակերպվել է Մանուշյան փողոց N 9/2 հասցեով (ծածկագիր 08-001-0440-0009) 78,6 (յոթանասունութ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Կարապետ Արտուշի Նազարյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 50):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Մանուշյան փողոց N 9/2 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 78,6 (յոթանասունութ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0440-0009) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Կարապետ Արտուշի Նազարյանին սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Կարապետ Արտուշի Նազարյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Կարապետ Արտուշի Նազարյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել սպասարկման օբյեկտ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարապետ Արտուշի Նազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

«___11___» ___սեպտեմբեր___ 2023 **թվականի** N___2032___-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ 422,66 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 07-ին կազմակերպվել է Ա.Սավոյան փողոց N 1/15 հասցեով (ծածկագիր 08-001-0317-0117) 422,66 (չորս հարյուր քսաներկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 2 600 000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 55):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ա.Սավոյան փողոց N 1/15 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 422,66 (չորս հարյուր քսաներկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0317-0117) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Ռուբեն Սամվելի Մկրտչյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: PAPIKYAN ARTUR 1709810248 Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» օգոստոսի 2023 **թվականի** N 2031-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գևորգ Սահակյանի (ՀՎՀՀ՝ 57462906, գրանցման ամսաթիվը՝ 26.07.2023 թ.) 2023 թվականի օգոստոսի 8-ին ներկայացրած հայտը համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 8-ին 16448-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գևորգ Սահակյանին Գյումրի քաղաքի Գորկու 12 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.08.2023

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«10» Փետրվարի 2023 թվականի № 2030Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 58 (ՎԿԱՅԱԿԱՆ №2472687) ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 60 (ՎԿԱՅԱԿԱՆ №12022016-08-0022) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Բուրաստան Փիլոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №16187 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Թումանյան փողոց, 58 (վկայական №2472687) և Թումանյան փողոց, 60 (վկայական №12022016-08-0022) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 58-60 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

Недействительный образец

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«10» Օգոստոսի 2023 թվականի № 2029-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍՈՒՐԵՆ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 53 ՇԵՆՔ, 38 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №07072023-08-0023) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Սուրեն Մատնիշյան փողոց, 53 շենք, 38 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №07072023-08-0023) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 53 ՇԵՆՔ, 5 ԲՆԱԿԱՐԱՆ**

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«10» օգոստոսի 2023 թվականի №2028Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 209 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 7,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 0,04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐՍՊԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի №1920–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Մազմանյան փողոց, 209 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից գտնվող 7,4 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 0,04 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպին համայնքի գույք գրանցելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 209/1 ՀՈՂԱՄԱՍ**

11.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«10» օգոստոսի 2023 թվականի № 2027-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 209 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 0,2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 0,2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐՍՊԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի №1919–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Մազմանյան փողոց, 209 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից գտնվող 0,2 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 0,2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպին համայնքի գույք գրանցելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 209/2 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ X ________________ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«10» օգոստոսի 2023 թվականի №2026-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 272/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №2020384) ԵՎ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 272/6 (ՎԿԱՅԱԿԱՆ №25072023-08-0011) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի էդվարդ Տոնոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №16519 թվագրմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Ղորղանյան փողոց 272/2 (վկայական №2020384) և Ն. Ղորղանյան փողոց 272/6 (վկայական №25072023-08-0011) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 272/2 ՀՈՂԱՄԱՍ**

Недействительная подпись

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«10» Օգոստոսի 2023 թվականի №2025-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 33Բ ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 130,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0114-0036) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Վազգեն Սարգսյան փողոց, 33բ հասցեի շինության հարևանությամբ գտնվող 130,7 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0114-0036) համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 33/10 ՀՈՂԱՄԱՍ**

Недействительная подпись

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«10» օգոստոսի 2023 թվականի N 2024-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ 422,66 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 07-ին կազմակերպվել է Ա.Սավոյան փողոց N 1/16 հասցեով (ծածկագիր 08-001-0317-0116) 422,66 (չորս հարյուր քսաներկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 2 600 000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 56):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ա.Սավոյան փողոց N 1/16 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 422,66 (չորս հարյուր քսաներկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0317-0116) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Ռուբեն Սամվելի Մկրտչյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռուբեն Սամվելի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՊԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ ... Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» օգոստոսի 2023 **թվականի** N 2023-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՂԱՐՇԱԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԵՐԻՑՅԱՆԻՆ 132,64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 07-ին կազմակերպվել է Հ.Ղանդիլյան փողոց N 49/8 հասցեով (ծածկագիր 08-001-1312-0133) 132,64 (մեկ հարյուր երեսուն ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Վաղարշակ Վոլոդյայի Երիցյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 770000 (յոթ հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 52):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հ.Ղանդիլյան փողոց N 49/8 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 132,64 (մեկ հարյուր երեսուն ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-1312-0133) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Վաղարշակ Վոլոդյայի Երիցյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Վաղարշակ Վոլոդյայի Երիցյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Վաղարշակ Վոլոդյայի Երիցյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վաղարշակ Վոլոդյայի Երիցյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: PAPIKYAN ARTUR 1704610248 Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«10» օգոստոսի 2023 թվականի N 2022 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,
3) Շուշիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի տեղակալ
4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,
5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պաշտոնական իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

2023թ. ք. Գյումրի

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ
/ՓՈԽԱՐԻՆՈՂ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» օգոստոսի 2023 **թվականի** N 2021-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆԵԼ՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. Գեորգի Ղազարյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի պետի պաշտոնակատար,
բ. Գագիկ Ավետիսյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.08.2023

X

Signed by: PAPIKYAN ARTUR

**2023թ. ք. Գյումրի**

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ
/ՓՈԽԱՐԻՆՈՂ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«10» օգոստոսի 2023 թվականի №2020Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԻՐՈՎԻ ՓՈՂՈՑ, 6 ՇԵՆՔ, 1Ա ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №432371) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ամալյա Գալստյանի լիազորված անձ Նարինե Թորոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №16555 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Կիրովի փողոց, 6 շենք, 1ա բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №432371) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ, 6 ՇԵՆՔ, 1/2 ԲՆԱԿԱՐԱՆ**

Недействительная подпись

X

Подписано: PAPIKYAN ARTUR 1704810248

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» օգոստոսի 2023 **թվականի** N 2079-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՇԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սաշա Մարտիրոսյանի (ՀՎՀՀ՝ 05509491, գրանցման ամսաթիվը՝ 14.03.1996 թ.) 2023 թվականի օգոստոսի 8-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 8-ին 16479-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սաշա Մարտիրոսյանին Գյումրի քաղաքի Պ. Սևակ 18 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սաշա Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

08.08.2023

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_09_» _օգոստոսի_ 2023 **թվականի** N_2018_-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՋԵՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ջեմմա Կարապետյանի (ՀՎՀՀ՝ 57396453, գրանցման ամսաթիվը՝ 21.01.2021 թ.) 2023 թվականի օգոստոսի 8-ին ներկայացրած հայտը համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 8-ին 16472-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ջեմմա Կարապետյանին Գյումրի քաղաքի Եղիշե Չարենց 2/2 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ջեմմա Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» օգոստոսի 2023 **թվականի** N 2014-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանի (ՀՎՀՀ՝ 57311905, գրանցման ամսաթիվը՝ 04.02.2016 թ.) 2023 օգոստոսի 07-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 07-ին 16339-2023 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցի հարևանությամբ իրականացնել պաղպաղակի բացօթյա վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 11-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.08.2023

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<09>> օգոստոսի 2023 թվականի N2016-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ԱՐԱՄ ՄԱՐՏՈՒՆԻԿԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արամ Մարտունիկի Շաբոյանի 2023 թվականի օգոստոսի 9-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի օգնական Արամ Մարտունիկի Շաբոյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի օգոստոսի 10-ից:
**2.** Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2 աշխատանքային օր՝ 2023 թվականի օգոստոսի 10-ից 11-ը ներառյալ:
**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Մարտունիկի Շաբոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.08.2023

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

**Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**
**փոխարինող**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<09>> օգոստոսի 2023 թվականի N 2015-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԵԼԻՔԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արտավազդ Մելիքի Ոսկանյանի 2023 թվականի օգոստոսի 8-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրու կոմունալ ծառայություն >> համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտավազդ Մելիքի Ոսկանյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի օգոստոսի 9-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2023 թվականի օգոստոսի 9-ից 22-ը ներառյալ:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Արտավազդ Մելիքի Ոսկանյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Արտաշես Արտավազդի Գևորգյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտավազդ Մելիքի Ոսկանյանին և Արտաշես Արտավազդի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«09» օգոստոսի 2023 թվականի N 2014 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանի (ՀՎՀՀ՝ 57311905, գրանցման ամսաթիվը՝ 04.02.2016 թ.) 2023 օգոստոսի 07-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 07-ին 16339-2023 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցի հարևանությամբ իրականացնել պաղպաղակի բացօթյա վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 11-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.08.2023

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«09» օգոստոսի 2023 **թվականի** N 2013-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԱՔՍԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 18/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արաքսի Եղիազարյանի (ՀՎՀՀ՝ 57319889, գրանցման ամսաթիվը՝ 16.02.2017 թ.) 2023 թվականի օգոստոսի 8-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 8-ին 16473-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արաքսի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Ե. Չարենցի 18/2 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արաքսի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՓՈԽԱՐԻՆՈՂ  Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» «օգոստոսի» 2023 թվական N 2012-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Եղսաբերդ Ռուբենի Սերոբյանը (անձնագիր՝ AP 0515798, տրված՝ 16.08.2016 թ., 016-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի հունվարի 23-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 39 որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 90-րդ կետի 2-րդ ենթակետում Եղսաբերտ Ռուբենի Սերոբյան անունը «Եղսաբերդ»-ի փոխարեն գրվել է «Եղսաբերտ» (հիմք՝ անձնագիր՝ AP 0515798, տրված՝ 16.08.2016 թ., 016-ի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Եղսաբերդ Ռուբենի Սերոբյանի 2023 թվականի օգոստոսի 7-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 16416 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի հունվարի 23-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 39 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) 90-րդ կետի 2-րդ ենթակետում՝ Եղսաբերտ Ռուբենի Սերոբյան անվանման մեջ՝ «Եղսաբերտ» բառը փոխարինել «Եղսաբերդ» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Եղսաբերդ Ռուբենի Սերոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

09.08.2023

X

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**Ո Ր Ո Շ Ու Մ**

**«08» Օգոստոսի 2023 թվականի N 2041-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 1509-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացի Սուսաննա Ալեքսանի Սիրունյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 7-րդ շարք N 19 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 108,55 քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 71,59 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունների կարգավիճակի մասին>> N 1509-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20/07/2023 թվականի N Կ-20072023-08-0191 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացի Սուսաննա Ալեքսանի Սիրունյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 7-րդ շարք N 19 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 108,55 քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 71,59 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունների կարգավիճակի մասին>> N 1509-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<108,55(մեկ հարյուր ութ ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<118,18(մեկ հարյուր տասնութ ամբողջ տասնութ հարյուրերրորդական)>> թվով և բառերով.
   2) որոշման 1-ին կետում <<1959 թվականի սեպտեմբերի 27-ին>> թվերը և բառերը փոխարինել <<1942 թվականի հոկտեմբերի 09-ին>> թվերով և բառերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«08» օգոստոսի 2023 թվականի N2010-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑ N 74/1 ՀԱՍՑԵԻ 117.05 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 181.76 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (132.43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐՅՈԺԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց N74/1 հասցեի 117.05 (հարյուր տասնյոթ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն(հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21062023-08-0053 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի N133-Ա որոշումը և քաղաքացի Սերյոժա Մուրադյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N14697 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց N74/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 181.76 (հարյուր ութսունմեկ ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (132.43 (հարյուր երեսուներկու ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը 1485888 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սերյոժա Մուրադյանին:
2. Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց N74/1 հասցեի 117.05 (հարյուր տասնյոթ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1230664 (մեկ միլիոն երկու հարյուր երեսուն հազար վեց հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Սերյոժա Մուրադյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Սերյոժա Մուրադյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սերյոժա Մուրադյանի միջոցների հաշվին:

08.08.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» օգոստոսի 2023 թվականի N 2009-Ա

### «ՏՐԻՊԼ ՍԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՆԳԱՌ (ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ) ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 2/27 ՀԱՍՑԵԻ 10.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի № 2/27 հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով առանձնացված հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 04072023-08-0023 վկայական):

«Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին վերը նշված հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասը հասարակական տրանսպորտի կանգառ (ոչ հիմնական շինություն) տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի N 844-Ն որոշման 3-րդ կետի «Գ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 12-ի N 43-Ա որոշումը և Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Նորայր Ցոլիկի Դավթյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 17-ին № 14895 թվագրությամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հասարակական տրանսպորտի կանգառ (ոչ հիմնական շինություն) տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի № 2/27 հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասը 23 (քսաներեք) տարի ժամկետով և տարեկան վարձավճար սահմանել 12000 (տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ժամկետի սկիզբ համարել 01.06.2024 թվականը, ավարտը՝ 31.06.2046 թվականը, վճարման կարգը՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը:
2. Սահմանված կարգով կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
3. Հասարակական տրանսպորտի կանգառի տեղադրման համար մեկամսյա ժամկետում սահմանված կարգով դիմել և ստանալ ճարտարապետահատակագծային առաջադրանք, ներկայացնել ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր և ստանալ շինարարության

թույլտվություն: Նախագծով սահմանված ժամկետում ավարտել հասարակական տրանսպորտի կանգառի տեղադրման աշխատանքները և շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հատկացված հողամասը քաղաքաշինական նպատակով օգտագործելու անհրաժեշտությունն առաջանալու դեպքում այն ենթակա է ազատման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առաջին իսկ պահանջով, առանց որևէ փոխհատուցման:
5. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին:
6. Առանձ հաստատված նախագծի և շինարարության թույլտվության հասարակական տրանսպորտի կանգառը տեղադրելու դեպքում որոշումը համարել անվավեր և մեղավորներին ենթարկել վարչական պատասխանատվության:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» օգոստոսի 2023 **թվականի** N 2008-Ա

### «ՏՐԻՊԼ ՍԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՆԳԱՌ (ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ) ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ Մ. ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑԻ № 6/3 ՀԱՍՑԵԻ 10.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոցի № 6/3 հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով առանձնացված հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 04072023-08-0012 վկայական):

«Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին վերը նշված հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասը հասարակական տրանսպորտի կանգառ (ոչ հիմնական շինություն) տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի N 844-Ն որոշման 3-րդ կետի «Գ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 12-ի N 43-Ա որոշումը և Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Նորայր Յուրիկի Դավթյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 17-ին № 14895 թվագրությամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հասարակական տրանսպորտի կանգառ (ոչ հիմնական շինություն) տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոցի № 6/3 հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասը 23 (քսաներեք) տարի ժամկետով և տարեկան վարձավճար սահմանել 12000 (տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ժամկետի սկիզբ համարել 01.06.2024 թվականը, ավարտը՝ 31.06.2046 թվականը, վճարման կարգը՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը:
2. Սահմանված կարգով կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
3. Հասարակական տրանսպորտի կանգառի տեղադրման համար մեկամսյա ժամկետում սահմանված կարգով դիմել և ստանալ ճարտարապետահատակագծային առաջադրանք, ներկայացնել ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր և ստանալ շինարարության

թույլտվություն: Նախագծով սահմանված ժամկետում ավարտել հասարակական տրանսպորտի կանգառի տեղադրման աշխատանքները և շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հատկացված հողամասը քաղաքաշինական նպատակով օգտագործելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում այն ենթակա է ազատման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առաջին իսկ պահանջով, առանց որևէ փոխհատուցման:
5. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին:
6. Առանձ հաստատված նախագծի և շինարարության թույլտվության հասարակական տրանսպորտի կանգառը տեղադրելու դեպքում որոշումը համարել անվավեր և մեղավորներին ենթարկել վարչական պատասխանատվության:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Շ Ի Ր Ա Կ Ի   Մ Ա Ր Զ**

**Գ Յ Ո Ւ Մ Ր Ի   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» օգոստոսի 2023 **թվականի** N2007-Ա

## «ՏՐԻՊԼ ՍԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՆԳԱՌ (ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ) ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ Մ. ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑԻ № 5/12 ՀԱՍՑԵԻ 10.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոցի № 5/12 հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով առանձնացված հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 04072023-08-0022 վկայական):

«Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին վերը նշված հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասը հասարակական տրանսպորտի կանգառ (ոչ հիմնական շինություն) տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի N 844-Ն որոշման 3-րդ կետի «Գ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 12-ի N 43-Ա որոշումը և Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Նորայր Յուրիկի Դավթյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 17-ին № 14895 թվագրությամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հասարակական տրանսպորտի կանգառ (ոչ հիմնական շինություն) տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոցի № 5/12 հասցեի 10.0 (տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասը 23 (քսաներեք) տարի ժամկետով և տարեկան վարձավճար սահմանել 12000 (տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ժամկետի սկիզբ համարել 01.06.2024 թվականը, ավարտը՝ 31.06.2046 թվականը, վճարման կարգը՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը:
2. Սահմանված կարգով կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
3. Հասարակական տրանսպորտի կանգառի տեղադրման համար մեկամյա ժամկետում սահմանված կարգով դիմել և ստանալ ճարտարապետահատակագծային առաջադրանք, ներկայացնել ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր և ստանալ շինարարության

թույլտվություն: Նախագծով սահմանված ժամկետում ավարտել հասարակական տրանսպորտի կանգառի տեղադրման աշխատանքները և շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հատկացված հողամասը քաղաքաշինական նպատակով օգտագործելու անհրաժեշտությունն առաջանալու դեպքում այն ենթակա է ազատման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առաջին իսկ պահանջով, առանց որևէ փոխհատուցման:
5. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին:
6. Առանձ հաստատված նախագծի և շինարարության թույլտվության հասարակական տրանսպորտի կանգառը տեղադրելու դեպքում որոշումը համարել անվավեր և մեղավորներին ենթարկել վարչական պատասխանատվության:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

07.06.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» օգոստոսի 2023 **թվականի** N 2006 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 87/12 ՀԱՍՑԵԻ 9.53 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Իսահակյան փողոցի N 87/12 հասցեի 9.53 (ինն ամբողջ հիսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Իսահակյան փողոցի N 87/12 հասցեի 9.53 (ինն ամբողջ հիսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«08» օգոստոսի 2023 թվականի N2005Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԷԴՎԱՐԴ ԱԼԲԵՐՏԻ ԱՂԵԿՅԱՆԻՆ,ԷԴԳԱՐ ԷԴՎԱՐԴԻ ԱՂԵԿՅԱՆԻՆ,ՍԻՐԱՆՈՒՇ ԷԴՈՒԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՔՍՅԱ ՀԱԿՈԲԻ ՂԵՎՈՆԴՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 161/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 77,14 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին, Սիրանուշ Էդուարդի հովհաննիսյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց N 161/2 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 77,14 (յոթանասունյոթ ամբողջ տասնչորս հարյուրերորդական )քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակ:

Քաղաքացի Էդվարդ Աղեկյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22. կետի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Էդվարդ Աղեկյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 30,11.2022թ. N 22596թվագրությամբ)՝ կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023FL3BS ծածկագրով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներէդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին, Սիրանուշ Էդուարդի հովհաննիսյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց N 161/2 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 77,14 (յոթանասունյոթ ամբողջ տասնչորս հարյուրերորդական )քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակը օրինական ճանաչել, տեղական բյուջե ենթակա է գանձման 178656 (մեկ հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Աղեկյաններին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

08.08.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

**2023 թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«08» օգոստոսի 2023 թվականի N 2004-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 482,26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 134,65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ( 102,25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի հարևանությամբ 482,26 (չորս հարյուր ութսուներկու ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 134,65 (մեկ հարյուր երեսունչորս ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (102,25 մեկ հարյուր երկու ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք տիրապետում և օգտագործում է քաղաքացի Կարապետ Աշուղաթոյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝, որը կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023L6SX5B ծածկագրով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի հարևանությամբ 482,26 (չորս հարյուր ութսուներկու ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 134,65 (մեկ հարյուր երեսունչորս ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (102,25 մեկ հարյուր երկու ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Կարապետ Աշուղաթոյանը:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

08.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«08» օգոստոսի 2023 թվականի N2003-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՆՈՐԱՅՐ ՄԿՐՏԻՉԻ ԽՈՒՄԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՆԵՍՕՂԼՅԱՆ ՓՈՂՈՑ N16/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 106.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Նորայր Մկրտիչի Խումարյանին պատկանող Գյումրի քաղաքի Հանեսօղլյան փողոց N16/2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 106.6 (հարյուր վեց ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Նորայր Մկրտիչի Խումարյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023JQ9PWM ծածկագիրը և քաղաքացի Նորայր Մկրտիչի Խումարյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանը դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N9811 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Նորայր Մկրտիչի Խումարյանին պատկանող Գյումրի քաղաքի Հանեսօղլյան փողոց N16/2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 106.6 (հարյուր վեց ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2.Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նորայր Մկրտիչի Խումարյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

08.08.2023

X [signature]

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«08» օգոստոսի 2023 թվականի N 2002-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՄԿՐՏԻՉԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՇԱՐՔ N1 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 76.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (57.22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ԲԱՑՎԱԾՔԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արմեն Մկրտիչի Սարգսյանին պատկանող Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք N1 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 76.5 քառակուսի մետր արտաքին (57.22 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ իրականացված է 1 (մեկ) բացվածքը:

Քաղաքացի Արմեն Մկրտիչի Սարգսյանի լիազորված անձ Ժորա Սարգսյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023RZGMDH ծածկագիրը և քաղաքացի Արմեն Մկրտիչի Սարգսյանի լիազորված անձ Ժորա Սահգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N9618 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 Քաղաքացի Արմեն Մկրտիչի Սարգսյանին պատկանող Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք N1 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 76.5 քառակուսի մետր արտաքին (57.22 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ իրականացված 1 (մեկ) բացվածքը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 211188 (երկու հարյուր տասնմեկ հազար հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

08.08.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«08» օգոստոսի 2023 թվականի N 2001-Ն

### ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆՁԱԴԵԻ ՓՈՂՈՑ N23 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 140.19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 11.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հովհաննես Անուշավանի Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N23 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 140.19(հարյուր քառասուն ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 11.69 (տասնմեկ ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Հովհաննես Անուշավանի Հովհաննիսյանի լիազորված անձ Անուշավան Հովհաննիսյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագրերը, քաղաքացի Հովհաննես Անուշավանի Հովհաննիսյանի լիազորված անձ Անուշավան Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N9531 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել քաղաքացի Հովհաննես Անուշավանի Հովհաննիսյանի (ծնված 1959 թվականի փետրվարի 24-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N23 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 11.69 (տասնմեկ ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N23 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 140.19(հարյուր քառասուն ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններն ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հովհաննես Անուշավանի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

08.08.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ